# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ն ԵԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/42 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Сапоги мод.2000 | Сапоги мод.2000 | РФ | Երկարաճիտ կոշիկ ձմեռային (ըստ հրավերի նկար N2) - «EVA» Էթիլենվինիլացետատե նյութից, անջրանցիկ, ջերմամեկուսիչ ներդիրով, տակացուն փափուկ, ճիտքերի բարձրությունը` 40+/-5սմ: Ճիտքերն ավարտվում են «Оксфорд 600D» տեսակի գործվածքի 5-6սմ լայնությամբ մանժետներով, որոնք կարվում են եզրից 10-15մմ հեռավորությամբ: Մանժետների ստորին հատվածը ողջ երկայնքով մշակված է 15+/-2մմ լայնությամբ, արծաթագույն, լուսանդրադարձիչ ժապավենով: Կոշիկի գույնը կհամաձայնեցվի պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման հետ: Մանժետը ճիտքի հետին կենտրոնական կարի ուղղությամբ ունի բացվածք` որտեղից կարգավորվում է միջադրված էլաստիկ կոշկաքուղի երկարությունը` պլաստմասե զսպանակավոր սեղմակի միջոցով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Կոշիկն ապահովում է ջերմակայունություն -600C-ի պայմաններում: Կոշիկի ներդիրը բաղկացած է հինգ շերտից՝ I-պոլիմերաֆիլերային, II-նրբաթիթեղային, III-պոլիէֆիրային, IV-շերտավոր և փրփրավոր պոլիուրետանային և V- մորթի՝ առնվազն 50% բնական բաղադրությամբ: Ներդիրի եզրերը մշակված են «Оксфорд 600D» տեսակի գործվածքով: Ներդիրն ունի ստուգիչ պիտակ, վրան տեղեկատվություն ապրանքի անվանման, մոդելի, տեխնիկական պայմանի, ծագման երկրի, արտադրող կազմակերպության, չափսի, լվացքի պայմանների մասին: Տակացուն չափսի, արտադրողի և տեխնիկական պայմանի դրոշմներով: Արտադրության տարեթիվը՝ 2021-2022 թվական: Փաթեթավորումը՝ պիտակավորված արկղերով: Պիտակի վրա նշված են՝ տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը: Պատվիրատուի պահանջով Մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի մատակարարվող ապրանքի՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին լաբորատոր փորձաքննության եզրակացություն՝ տրված ՀՀ պետական հավաստագիր ունեցող լաբորատոր փորձաքննական կենտրոնի կողմից: Չափսերը ըստ հրավերի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО «РЕФОРС ГРУП» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/42 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | |